ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝	Միջառարկայական կապերի օգտագործումը և ինտեգրված դասերի կազմակերպումը տարրական դասվանդման մեթոդիկա առարկայի ուսուցման գործընթացում
ԱՌԱՐԿԱ՝	Մանկավարժություն և տարրական ուսուցման մեթոդիկա
ՈՒՍՈՒՑԻՉ	Թադևոսյան Գոհարիկ
ԴՊՐՈՑ	Սիսիանի №1 հիմնական դպրոց
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝	Հովհաննիսյան Ֆլորա

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

§ 1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ: ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 4

§ 2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ: ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ 9

2.1 Միջառարկայական կապերի իրականացումը տարրական դպրոցում 11

2.2 Փորձարարական մաս 14

2.2.1 Փորձարարական դաս 1 14

2.2.2 Փորձարարական դաս 2 16

2.2.3 Փորձարարական դաս 3 19

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 22

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 23

Հավելվածներ 24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՈՒԺ ՈՒՆԵՆ ԳՐՔԵՐԸ.

ԴՈՒ ԲԱՑՈՒՄ ԵՍ ՆՐԱՆՑ, ԻՍԿ ՆՐԱՆՔ՝ ՔԵԶ:

Թեմայի արդիականությունը: Միջառարկայական կապերում հսկայական կրթական հնարավորություններ կան՝ աշակերտների աշխարհայացքի ձևավորման և հետագա զարգացման համար: Ուսուցման գործընթացի բարելավվումը միշտ արդիական է ցանկացած առարկայի ուսուցչի համար: Այսպիսով արդիական է ուսումնասիրել միջառարկայական մոտեցումը, որը լուծում է կրթության առարկայական համակարգում առկա հակասությունների համար՝ ցրված աշակերտների կողմից գիտելիքների յուրացման և դրանց սինթեզի, գործնականում, աշխատանքի և մարդու կյանքում ինտեգրված կիրառման անհրաժեշտության միջև:

Գիտելիքը ինտեգրված կերպով կիրառելու, այն սինթեզելու, գաղափարներն ու մեթոդները մի գիտությունից մյուսը փոխանցելու կարողությունը հիմնված է գիտականև տեխնոլոգիական առաջընթացի ժամանակակից պայմաններում մարդու գործունեության ստեղծագործական մոտեցման վրա: Նման հմտություններով զինվելը տարրական և միջնակարգ կրթության հրատապ խնդիր է, որը թելադրված է գիտության մեջ ինտեգրման միտումներով և լուծվում՝ միջառարկայական մոտեցման միջոցով:

Հետազոտական նպատակն է ուսումնասիրել միջառարկայական կապերի օգտագործումը և ինտեգրված դասերի կազմակերպումը՝ տարրական դասվանդման մեթոդիկա առարկայի ուսուցման գործընթացում:

Նպատակից բխող խնդիրներ՝

- Պարզել միջառարկայական կապերի էությունը, դերն ու նշանակությունը:
- Բացահայտել ինտեգրված դասերի կազմակերպման հիմքերը:
- Պարզաբանել միջառարկայական կապերի օգտագործմանարդյունավետությունը:

Առաջադրված խնդիրները լուծելիս օգտագործվել են հետազոտության հետևյալ մեթոդները ՝ հոգեբանական, մանկավարժական և մեթոդական գրականությանվերլուծություններ:

§ 1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ: ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գիտությունների և արտադրության ինտեգրացման նորագույն ժամանակներում առանցքային նշանակություն է ստանում գիտությունների համագործակցությունը՝ միջգիտական կապերը: Քանի որ ուսումնական առարկաները ուսուցանում են գիտությունների հիմունքները, ուստի հրատապ էդառնում նաև ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի իրականացումը:

Միջառարկայական կապերի օգտագործման իմ փորձից համոզվում եմ, որ այն նպաստում է գիտելիքների խորը և բազմակողմանի յուրացմանը, գիտական հասկացությունների և օրենքների ձևավորմանը, ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործմանը և նրա օպտիմալ կազմակերպմանը, գիտական աշխարհայացքի ձևավորմանը, նյութական աշխարհի ընդհանրացմանը, բնության և հասարակության մեջ երևույթները փոխկապվածության մեջ ընկալմանը: Բացի այդ, դրանք նպաստում են սովորողների գիտելիքների գիտական մակարդակի բարձրացմանը, զարգացնում են տրամաբանական մտածողությունը և ստեղծագործական ունակությունները [8]:

Միջառարկայական կապերի իրագործումը ինձ հնարավորություն է տվել խնայելու ժամանակը, սովորողների ընդհանուր ուսումնական կարողությունների և հմտությունների ձևավորման համար ստեղծելու նպաստավոր պայմաններ:

Հանրակրթական դպրոցի պահանջներին համապատասխան՝ այսօր մեծանում է բնագիտամաթեմատիկական առարկաների միջև կապերի բացահայտման դերն ու նշանակությունը: Երբ այն ճիշտ ու խելացի է կազմակերպվում հարստանում և ընդլայնվում են սովորողների գիտելիքները: Ժամանակակից գիտության բոլոր ճյուղերը սերտորեն կապված են, և դա պետք է արտահայտվի նաև դասավանդման ընթացքում:

Դպրոցի առջև դրված կարևոր խնդիրներից մեկը սովորողների ընդհանուր ուսումնական կարողությունների ու հմտությունների զարգացումն է, որում մեծ

ներդրում կարող է ունենալ տարրական դասարանի դասվարը, քանի որ ուսուցման հիմքը դրվում է հենց այդ շրջանում:

Ընդհանուր ուսումնական կարողություններից են պլանի, սեղմագրի կազմումը, որոնք կարևոր են ոչ միայն դպրոցում լավ սովորելու համար, այլև հետագա կյանքում գիտելիքների ձեռքբերման, դրանք կենցաղում, անծանոթ իրավիճակներում կիրառելու համար [8]:

Այսինքն, աշակերտի ձեռք բերած գիտելիքները ծառայում են ոչ միայն թեստ գրելուն, այլ կյանքի ծանոթ և անծանոթ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելուն: Դրա համար պետք է լավ գիտակցենք սովորողին ներկայացվող ընդհանրական պահանջների համակարգը ըստ Հանրակրթության պետական չափորոշչի:

Զարգացնող ուսուցման մանկավարժությունը պահանջում է ուսումնական տարբեր առարկաների՝ միմյանց մեջ ներթափանցման ուղիների մշակում: Այդ կերպ պայմաններ են ստեղծվում դասավանդման ընթացքում աշակերտների կողմից բազմաբաղադրիչ գիտելիքների ձեռքբերման համար:

Այսօրվա դպրոցում ուսուցումը փորձում եմ կազմակերպել առանձին առարկաներից ծրագրային գիտելիքների հաղորդման եղանակով, ինչը առանձին առարկաներից տրվող գիտելիքների ամբողջություն չէ, հետևաբար աշխարհի մասին տալիս է մասնատված, ոչ ամբողջական պատկերացում: Համաշխարհային մանկավարժական միտքը վկայում է, որ ուսուցման այս ձևը արդյունավետ չէ, և իբրև խնդրի լուծման ելք՝ առաջադրում է ինտեգրված ուսուցումը, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը: Ինտեգրված ուսուցման ծրագրերը փորձում եմ կազմել այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնված լինեն մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն: Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են միավորված (ինտեգրված) ծրագրերի հետևյալ տեսակները [9].



Ինտեգրված դասերը ժամանակակից ուսուցման մեթոդների նորույթներից մեկն են: Սրա տիպի դասերը անցնում եմ տարբեր առարկաներից: Ինտեգրված դասերը միավորում եմ տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ դասերի օրինակներ: Կրթական համակարգում շարունակաբար կատարվող բարեփոխումները պահանջում են նոր մեթոդոլոգիական մոտեցում կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների լուծման ժամանակ, որը կնպաստի կրթության որակի բարձրացմանը [9]:

Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ: Օրինակ՝ ինտեգրում եմ առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման մեթոդները, ինչպես նաև՝ տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը:

Դրանք հիմնականում կիրառվում են հետևյալ դեպքերում.

- թեմայի ուսումնասիրության ժամանակի խնայողության դեպքում՝ ցանկանալով օգտվել մեկից ավելի առարկաների պատրաստի բովանդակությունից,

- այնպիսի ընդհանրացված հասկացությունների (շարժում, ժամանակ, զարգացում, մեծություն և այլն), օրենքների, սկզբունքների ուսումնասիրության ժամանակ, որոնք ներառում են մարդկային կյանքի և գործունեության ամենատարբեր ասպեկտներ,
- երբ ուսումնասիրվող նյութը դուրս է գալիս ուսուցանվող առարկայի ծրագրի շրջանակներից,
- առարկայի դասավանդման ժամանակ պրոբլեմադիր և զարգացնող ուսուցում իրականացնելու ժամանակ [9]:

Տարբեր է նաև ինտեգրված դասերի տևողությունը: Բայց առավելաբար օգտագործում եմ երկու կամ երեք դասաժամ՝ միավորված մեկ դասի մեջ: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Այսպիսի դասի կազմակերպմամբ հաղթահարվում է խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, ընդլայնվում ինֆորմացիան, փոփոխվում ուսումնասիրության շրջանակները, խորացվում հասկացողությունը, հստակեցվում հասկացություններն ու օրենքները, ընդհանրացվում թեման, միավորվում սովորողների փորձն ու դրա ըմբռնման տեսական մասը, համակարգվում ուսումնասիրված նյութը:

Դասի ընթացքում ինտեգրում եմ մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց: Օրինակ՝ երբ վերցնում եմ բովանդակությունը, ապա ինտեգրման համար առանձնանցնում եմ բովանդակության ցանկացած բաղադրիչ՝ հասկացություն, օրենք, սահմանում, փաստ և այլն: Ինտեգրում եմ նաև բովանդակային այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են մտավոր և գործնական կարողություններն ու հմտությունները: Տարբեր առարկաներից վերցրած այս բաղադրիչները, որոնք միավորվում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ, որի շուրջ հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը: Համակարգ ձևավորելը դառնում է դասի կազմակերպման կարևորագույն մասը, քանի որ հիմք է հանդիսանում հետագայում մշակվող դասավանդմանմեթոդիկայի և նրա կառուցման տեխնոլոգիայի համար [9]:

Այսպիսով, կրթական ծրագրերի բովանդակությունը կազմող տարբեր առարկաների իմաստն այն է, որ այդ բովանդակությունն արտացոլում է ամբողջական

իրականությունն իր տարբեր կողմերով՝ փոխկապակցված ձևերով, իսկ միջառարկայական կապերը լայն հնարավորություն են ստեղծում ուսուցման նկատմամբ դրսևորելու համընդհանուր մոտեցում՝ սովորողների համար հիմք հանդիսանալով իրականության նկատմամբ միասնական հայացքների ձևավորմանը:

Մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերը: Ուսուցման գործընթացում մեծ տեղ եմ հատկացնում միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են: Միջառարկայական կապերի մասին Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը.

«Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ» [1]:

Այսպիսով միջառարկայական կապերի պահպանումը ժամանակակից դպրոցում ուսուցման կարևորագույն սկզբունքներից մեկն է: Այն ապահովում է

բնագիտական և հումանիտար առարկաների փոխադարձ կապը, և դրանց կապը կյանքի հետ:

§ 2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ: ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԵՎ ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ուսուցման պրոցեսում աշակերտների գործունեության և պահանջմունքների, նպատակների, հետաքրքրությունների համապատասխանությունից կախված, նյութը և մեթոդներն ընտրելիս անհրաժեշտ համարեցի հաշվի առնել տվյալ դասարանը, նրա առանձին խմբերը կազմող աշակերտների հնարավորությունները, պահանջմունքները, շարժառիթները և հետաքրքրությունները [7]:

Ուսումնական նյութի շարադրման կամ սովորողների հիշողության մեջ հենակետային գիտելիքների վերականգնման ժամանակ օգտագործում եմ հարակից դասընթացներում սովորած փաստեր, հասկացություններ, օրենքներ:

Պետք է նշեմ, որ միջառարկայական կապերի իրագործման հաջողությունն ապահովող կարևոր հանգամանք է նաև ուսուցչի՝ դասին մանրակրկիտ պատրաստվելը: Գործադրվող մեթոդները նպաստում են ինքնակրթության կարողությունների ձևավորմանը: Ուսումնական մեթոդների համակարգում հստակորեն արտացոլվում են ուսուցչի և աշակերտների գործունեության փոխադարձ կապը: Պետք է օգտագործվեն ուսուցման մեթոդների ոչ միայն ուսուցողական, այլև զարգացնող և դաստիարակող ֆունկցիաները: Միջառարկայական կապերի իրագործման արդյունքում կազմավորվում է գիտելիքները՝ մի ընդհանուր համակարգում ընդգրկելու, հիշողության մեջ ամբողջական կայուն գոյացություն ձևավորելու կարողություն [6]:

Առանձնացնել եմ դասապրոցեսում միջառարկայական կապերի իրագործմանձևերից հետևյալները.

- տնային հանձնարարություն այլ առարկաներից,
- միջառարկայական բնույթի խնդիրների լուծում,
- արտադասարանային պարապմունքների ժամանակ միջառարկայական կապերի իրագործում (խմբակներ, վիկտորինաներ և այլ),
- միջառարկայական բովանդակությամբ միջոցառումներ [7]:

Ստորև ներկայացնեմ դասի պլանավորման ընթացքում անհրաժեշտ տեղեկատվության հավաքման և համակարգման մի քանի կետ, որոնց նա պետք է ուշադրություն դարձնի.

- ո՞ր դասարքում է անհրաժեշտ նյութը,
- հարակից առարկայում ե՞րբ է ուսումնասիրվում տվյալ նյութը,
- հարակից առարկայի նյութի համառոտ նկարագրությունը,
- ի՞նչ մեթոդ կամ հնար է նպատակահարմար կիրառել հարակից առարկայի նյութին անդրադառնալիս [6]:

Դասին ուսուցչի բարձր մակարդակով նախապատրաստվելու ցուցանիշներից մեկը դասանյութի համակողմանի վերլուծությունն է, որի ժամանակ աշակերտներին տնային հանձնարարությունները տալիս եմ, պահանջելով՝ հենվել մի առարկայից յուրացրած գիտելիքների վրա, բացատրել այն փաստերն ու երևույթները, որոնք ուսուցանվում են այլ դասընթացներում:

Միջառարկայական կապերով դասի գնահատման և վերլուծության համար նպատակահարմար են հետևյալ չափանիշները.

- ուսումնադաստիարակչական խնդիրների ձևակերպման մեջ միջառարկայական կապի առկայության արտացոլում,
- դասին կիրառվող բովանդակային-տեղեկատվական միջառարկայական կապերի տեսակները (այլ առարկաներից հետաքրքրող կոնկրետ փաստեր, հասկացություններ, օրենքներ, հարցեր),
- միջառարկայական կապերի իրականացման մեթոդներ և հնարներ, դրանց համապատասխանությունը դասի ուսումնադաստիարակչական պահանջներին,
- միջառարկայական կապերի իրագործման ժամանակ սովորողների ակտիվությունը, հետաքրքրություններն ու հաջողությունները [3]:

2.1 Միջառարկայական կապերի իրականացումը տարրական դպրոցում

Համակցված դասերը հաճախ ուղեկցվում են բացահայտումներով ու հայտնագործություններով: Այս պարագայում հարկ է ներկայացնել համակցված դասիմի օրինակ սեփական փորձից.

Նպատակները հնարավորություն են տալիս հասնել նոր մակարդակի, բացահայտել իր համար տեղեկություններ, մտնել նոր փուլ, իսկ սովորողին՝ զարգացնել ստեղծագործական մտածողությունը, ինքնակրթվելու հնարավորություն ստեղծել: Ընդ որում, ուսումնական նյութերը պետք է լինեն մատչելի, ոչ ծանրաբեռնված, դասարանում ուսումնական գործընթացը պետք է համապատասանի սահմանային ծավալին: Սովորողը պետք է ստանա այնքան տեղեկություն, որ չխճճվի նյութերում:

Շատ կարևոր է տարբերել, թե ո՞ր թեմաներից կարելի է անցկացնել դասեր, որտեղ կարող ենք պահպանել միջառարկայական կապեր և որն է լինելու մեր դասի գլխավոր նպատակը: Երբ որոշված է ընդհանուր նպատակը, արդեն առարկաների բովանդակությունից ընտրում եմ միայն այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են նպատակին հասնելու համար: Սակայն դեռևս ստեղծված չեն բավականաչափ ինտեգրված դասագրքեր, ընդգծված և համակարգված չեն ուսումնական նյութերը, որը մեր՝ ուսուցիչների համար դառնում է դժվարին խնդիր: Սակայն ուսուցչի համար դժվար չէ նախապես պլանավորել, թե տվյալ առարկայից այս կամ այն թեման, ենթաթեման անցնելիս ինչպիսի կապերեր է ստեղծվելու հարակից առարկաների միջև:

Մեր նպատակն է սովորողին ուղղորդել, սովորեցնել հետազոտել, ստեղծագործել, որոնել, դասը յուրացնել հետաքրքիր ու ոչ ստիպողական մեթոդներով: Այսպիսով, ինտեգրված դասը դառնում է նաև գրավիչ դերախաղ, սեմինար, քննարկում, ոչ թե լոկ գիտելիքների ծավալի մխրճում:

Այսօր մանկավարժությունը հակված է մտածելու, որ նմանատիպ դասերը սովորողի՝ մարդկային դրսևորման հիմք կարող են հանդիսանալ: Այն նպատակ ունի նաև ուսուցչին օգնել հարմարվելու աշխույժ, անհատական հետաքրքրություններով լի սովորողին, մյուս կողմից էլ՝ շատ է օգնում նախագծերով աշխատող

ուսուցիչներին: Ինտեգրված դասի արդյունքում սովորողը, ոչ ստիպողաբար, տանը կատարում է առաջադրանքներ, հետազոտում է, ապա ներկայացնում դպրոցում,որը խրախուսվում է: Այստեղ սովորողին չես պարտադրում կատարել, նա այն անում է ինքնակամ, հաճույքով: Կարծում եմ, որ սոսկ պարտադրված տնային հանձնարարությունն արդեն հնացած ձև է: Տարիներ շարունակ դասավանդման փորձը ցույց է տալիս, որ սովորողը հակված չէ տանը իր հետաքրքրությունները մի կողմ դնելու և զբաղվելու տնային առաջադրանք կատարելով, հատկապես, որ ուսուցիչը չի հասցնում յուրաքանչյուր հանձնարարություն միշտ անհատապես ստուգել:

Միևնույն ժամանակ, որպես կանոն, բարեխիղճ սովորողը կատարում է տնային առաջադրանքը՝ սահմանափակվելով տեքստը արտագրելով, առաջադրանքը թերի կատարելով: Նման աշխատանքը գիտելիքներ չի ավելացնում: Դրա փոխարեն դպրոցում ճիշտ կազմակերպված դասը հանգեցնում է այն բանին, որ սովորողը տանը ինքնուրույն նման աշխատանքներ կատարի, զբաղվի ինքնակրթությամբ, որը միշտ էլ հմտացնում է: Այժմ խիստ կարևորվում է, ոչ միայն աշակերտների, այլև ուսուցիչների մասնագիտական ու որակական կարողությունները:

Վերջին տարիներին իրականացված ուսուցիչների մասնագիտական զարգացման դասընթացներում ներկայացվել են ուսուցման ակտիվ և համագործակցային մեթոդները: Դրանց կիրառումը այսօր կարևոր է,քանի որ ուսուցումը հնարավոր չէ առանց դասապրոցեսին սովորողի ակտիվ մասնակցության: Երեխաները պետք է հնարավորություն ունենան անհատական,զույգերով փոքր ու մեծ խմբերով աշխատելու, ինչը հնարավորություն կտաուսումնական գործընթացը դարձնել բազմազան եւ ոչ ձանձրալի: Աշակերտները պետք է հնարավորություն ունենան աշխատել ոչ միայն ուսուցչի,այլև միմյանց հետ: Բացի այդ երբեմն երեխաները միմյանցից ավելի լավ են սովորում, քան ուսուցիչներից: Բայց ոչ բոլոր առարկաներից ու ոչ բոլոր դասերին կարելի է կիրառել նոր, ինտերակտիվ մեթոդներ ու դասն անցկացնել համագործակցային մեթոդով: Ուստի պետք է հստակ պատկերացնել տվյալ դասին համապատասխանող մեթոդները, դրանից բխող արժեքային համակարգն ու աշակերտների կարողությունները, քանի որ

յուրաքանչյուր դասի համար անհրաժեշտ է կիրառել սոցիալական հմտությունների ու արժեքային համակարգի ընտրության յուրովի մոտեցում:

Վերոնշյալ խնդիրների լուծման արդյունավետ մեթոդ է. քանի որ միջառարկայական կապերի հաճախակիությունն ապահովում է հանձնարարված դասի համակողմանի յուրացում մատչելիություն, ձևավորում է բազմակողմանիորեն զարգացած անձնավորություն, բարձրացնում է աշակերտի մոտ ինքնագնահատականն ու ստեղծում անձնավորություն, որն ունի սովորելու կարողություն, ինքնուրույն որոշումներ ընդունելու և դրանք հիմնավորելու կարողություն, նպատակներ դնելու, դրանց հասնելու ուղիներ մշակելու և սեփական անելիքը, գործը ծրագրելու կարողություն և այլն:

Այսպես, ստեղծում եմ պայմաններ երեխայի բնական ճանաչողական գործունեության զարգացման համար և նրա ինքնահաստատմանը անհատական փորձի կուտակման միջոցով: Միջառարկայական կապեր պահպանելով՝ ուսուցումը կդառնա ավելի դյուրին և շուտ յուրացվող: Աշակերտները կկարողանան ոչ միայն ձեռքբերել գիտելիքներ այս կամ այն թեմայի շրջանակներում, կամ ստանալ զուտ ինչ որ տեղեկատվության պաշար, այլև՝ կկարողանա արտահայտել իր յուրացրածը տարբեր դասաժամերին, ազատորեն ընդհանրացումներ կկատարի միևնույն թեմայի միջև տարբեր առարկաների ուսուցման պրոցեսում: Միջառարկայական կապերը պահպանելով, դասը կառուցում եմ նոր նյութի հաղորդման, ոչ թե ավանդական դասախոսության, կամ աշակերտի պասիվ մասնակցության եղանակով, այլ՝ աշակերտակենտրոն եղանակով, երբ նոր նյութը ներկայացնում է աշակերտը, մյուս հարակից առարկաներից ունեցած իր գիտելիքների պաշարներով, իսկ բացթողումներն ու շտկումները կատարում եմ ես: Հարկ է նշել, որ ոչ բոլոր թեմաները կընդգրկվեն, այլ՝ ավելի կիրառելիները, քանզի ուսուցումը խիստ անհատական պրոցես է, և յուրաքանչյուր ուսուցիչ կարող է այս կամ այն թեմային ունենա իր անհատական մոտեցումներն ու դասավանդման մեթոդները:

2.2 Փորձարարական մաս

Դասի պլանավորումը	Դասի թեման /ի՞նչ ուսուցանել/ Դասի նպատակները /ինչու՞ ուսուցանել/ Ակնկալվող արդյունքներ Գնահատում Ուսուցման մեթոդներ /ինչպե՞ս ուսուցանել/ Դասի կահավորումը Դասի ընթացքը Տնային հանձնարարություններ Դասի ամփոփում Դասի անդրադարձը
Դաստիարակչական նպատակը	Նպաստել՝ գիտելիքի, ուսուցման գործընթացի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը, մտահանգումների, հայացքների ուտեսակետների, անձնային որակների, ինքնագնահատման, ինքնուրույնության և արժեհամակարգի ձևավորմանը, պատշաճվարքագծի ու փորձի ձեռքբերմանը:
	Աթթնացնել՝ սովորողների հետաքրքրասիրությունը, առաջացնելհետաքրքրություն առօրյայի և հասարակական կյանքի տարբեր իրադրությունների նկատմամբ:
	Սովորողներին մղել՝ ակտիվության, ինքնուրույնության, ազնվության, քննադատության, հաստատակամության, նպատակասլացության, վերաբերմունքի ու վարքագծի միջև դրսևորումների:

2.2.1 Փորձարարական դաս 1

Աշակերտին սովորեցրու աշխատել, նրան ստիպիր ոչ միայն սիրել աշխատանքը, այլև այնքան հարազատանալ, որպեսզի այն դառնա նրա 2-րդ բնավորությունը, որ նա ինքնուրույն մտածի, որոնի, իրեն դրսևորի, զարգացնի իր ներքին ուժերը, իրենից մշակի անսասան մարդու:

Ա. Դիստերվեգ

Առարկա՝ մայրենի (գերիշխող)

Դասարան՝ 4-րդ

Դասի թեման՝ Ավ. Իսահակյան «Ազգային երգը»Նպատակը՝

1. Ընդլայնել երեխաների պատկերացումները մայրենիի, այբուբենի, հայ գրի մասին:
2. Քննարկել և ընթերցածի շուրջ արտահայտել սեփական կարծիքներ:Խնդիրներ՝

1. Կրթական
   - Բացահայտել դասի վերաբերյալ ձեռք բերած գիտելիքները:
   - Ակտիվացնել նրանց՝ ներգրավվելով քննարկվելիք նյութի մեջ:
2. Դաստիարակչական
   - Նպաստել ինքնուրույնության և արժեհամակարգի դրսևորմանը,
   - Արթնացնել սովորողների հետաքրքրությունը հասարակական կյանքի տարբեր իրադրությունների նկատմամբ,
   - Մղել ակտիվության, ինքնուրույնության, նպատակասլացության,
   - Գիտակցել ազգային ավանդույթների պահպանման անհրաժեշտությունը,
   - Ձևավորել հայրենիքի պաշտպանության գործում սեփական դերի գիտակցումը:
   - Կարևորել մայրենիի դերն ու նշանակությունը:

Դասի մեթոդը՝ քառաբաժան

Միջառարկայական կապեր՝ կերպարվեստ, երաժշտություն, ես և շրջակա աշխարհը

Խաչվող հասկացություններ՝ թեման կապել իրական կյանքի հետ համադրման համատեքստում:

Պատճառ և հետևանք.

- «Ինչպե՞ս տեղի ունեցավ»,
- «Ինչու՞ տեղի ունեցավ»,
- «Ի՞նչը ստիպեց, որ տեղի ունենա»,
- «Ի՞նչ պայմաններ էին դրա համար անհրաժեշտ»:

Դասի փուլերը՝

1. Խթանման. Նախապատրաստել սովորողներին՝ հաղորդելով դասի բուննպատակը:
2. Իմաստի ընկալման. Սովորողների մոտ պահպանել հետաքրքրության աճը նյութի վերաբերյալ:
3. Կշռադատման. Նորի գիտելիքների միաձուլում ունեցածին և դրանքաստիճանական ինտեգրում:

Վերջնարդյունքը՝

1. Կկարողանան վերլուծել բնագրի որոշ հատվածներ,
2. Կկարողանան ընթերցածի շուրջ դատողություններ անել,
3. Կբացահայտեն հեղինակի մտադրությունը՝ բավարարելով բնագրի ենթաշերտերը:

Քառաբաժան

Ի՞նչ տեսա	Ի՞նչ լսեցի
Այգի, ձի, գյուղ, հավք, գետ, Մասիս սար, խաղողի ողկույզ, դպրոց, աշակերտ..	Խշշոց, ձայներ, բառաչ, սլացք, ծփանք,դոփյուն, շառաչ, գոչյուններ
Ի՞նչ զգացի	Ի՞նչ կցանկանայի
Խնկահոտ, ափսոսանք, հպարտություն, ուրախություն, անկոտրում կամք, հայի ըմբոստ ոգին:	1.Հար ու հավետ ապրեր հայող լեզուն2.Հայը չլքեր Հայաստանը 3.Ամենուրեք լիներ հայատառ ուսուցում 4.Հայը խոսեր մաքուր հայերենով 5.Ավելի շատ լինեին մայրենիի ժամերը

2.2.2 Փորձարարական դաս 2

Դասի բնույթը՝ Ինտեգրված դաս	
Գերակշռող առարկա ՝ Մաթեմատիկա,	Ինտեգրված առարկա՝ Ես և շրջակա աշխարհը,
Թեմա՝ Մաս և ամբողջ	Թեմա՝ Ամփոփում
Նպատակ՝	Ամրապնդել սովորածը, զարգացնել երեխաների մոտ խմբային աշխատանքի կարողությունը, ձևավորել արժեհամակարգը:
Վերջնարդյունք՝	Կկարողանա սովորածը կիրառել գործնականում, կկարողանա հարցերին պատասխանել բանավոր, կապեր ստեղծել երկու, առարկաների միջև,

Անհրաժեշտ նյութեր՝ Աշխատանքային թղթեր, գրիչ, քարտեր, պրոյեկտոր, սահիկաշար, միրգ, գլխարկ դրոշակներ, կարկանդակ, առարկաների ծառ:

Մեթոդներ՝ Հարց ու պատասխանի մեթոդ,:

Ընթացքը

Հարց ու պատասխանի մեթոդով ամփոփել նախորդ դասերից վերցրած գիտելիքները: Կամփոփեն, Ճանապարհորդությունները վաղ անցյալում, թեման: Կկատարեն բանավոր հաշիվ:

Իմաստի ընկալում ՝ Մաս և ամբողջ թեման բացատրել խնձորի, եռագույնի, զինանշանի, պիցցայի օգնությամբ:

Ստուգելու համար, թե որքանով են յուրացրել նոր դասը, պահանջել նախ հաշվել խմբերում դրված զամբյուղի միջի մանդարինները և վերցնելով մեկը՝ հաշվել, թե, որ մասն են վերցրել զամբյուղում դրված մանդարինների քանակի և որ մասը մնաց:

Ֆիզկուլտուրա դադար՝ Ճշմարիտ և ոչ ճշմարիտ դատողություններ:

I խումբ

- Նայի՛ր ծառին և ասա՛, թե մաթեմատիկան ծառի ո՞ր մասն է զարդարել:
- Գծի՛ր 10 սանտիմետր երկարություն ունեցող հատված և ներկի՛ր 1/2 մասը:
- Ա կետից մինչև Բ կետը 8 կմ է: Մեքենայի վառելիքը բավականացրեց անցնել ճանապարհի կեսը: Ճանապարհի ո՞ր մասն անցավ մեքենան և ո՞ր մասը մնացանցնելու:

II խումբ



- Տրված քառակուսու, ո՞ր մասն է ներկված:
- Կտրե՛ք ձեր կարկանդակը 4 հավասար մասի և վերցրե՛ք երկու կտոր: Կարկանդակի ո՞ր մասն եք վերցրել և ո՞ր մասն է մնացել:
- Ո՞վ հայտնագործեց Աֆրիկան

III խումբ

- Աշոտը կերավ 8 կտորից կազմված խմորեղենի 3 կտորը: Ո՞ր մասը կերավ Աշոտը և ո՞ր մասը մնաց:
- Քանի՞ մայրցամաք և օվկիանոս կա:
- Կտրե՛ք ձեր սեղանին դրված խնձորը 4 հավասար մասերի և ցո՛ւյց տվեք 2/4 մասը:

IV խումբ

- Հաշվե՛ք դասասենյակում առկա խմբերի քանակը և որոշե՛ք , թե ձեր խումբը այդ խմբերի քանակի, ո՞ր մասն է կազմում:
- Քանի՞ անգամ հայտնագործվեց Ավստրալիան:
- Օրն ունի 24 ժամ: Հաշվե՛ք , թե մեկ ժամը օրվա ո՞ր մասն է:

Օգտվելով մաս և ամբողջ հասկացություններից, ցուցադրել նկարներ և տալ միասնության ամբողջականության գաղափարը: Կձևավորվի երեխաների արժեհամակարգը, կհասկանան միասնության գաղափարի կարևորությունը:

2.2.3 Փորձարարական դաս 3

Դասի բնույթը՝ Ինտեգրված դաս	
Գերակշռող առարկա ՝ Մայրենի,	Ինտեգրված առարկա՝ Ես և շրջակա աշխարհը,
Թեմա՝ Ու՞մ նվիրել իմ սիրտը	Թեմա՝ Ամփոփում
Նպատակ՝	Աշակերտների մոտ զարգացնել արժեհամակարգ, սովորեցնել ընկերասիրություն, երախտագիտություն, ցույց տալ լավ մարդու կերպարը
Վերջնարդյունք՝	Կկարողանա՝ -սովորածը կիրառել գործնականում, -հարցերին պատասխանել բանավոր, -կապեր ստեղծել երկու առարկաների միջև,

Ընթացքը

Այսօր մենք ամփոփում ենք մայրենիից անցած այն բաժինը, որը կոչվում է «Ում նվիրեմ ին սիրտը»: Քանի որ մայրենին մեզ հնարավորություն է տալիս հղկվելու, կատարելագործվելու, օժտվելու բարձր հատկանիշներով, ուզում եմ իմի բերենք այն լավագույնը, որ ձեռք ենք բերել այս բաժինը ուսումնասիրելիս: Միևնույն ժամանակ, նկատի ունենալով, որ կենտրոնում մարդն է՝ իր սիրո բոլոր դրսևորումներով, կարողացանք բացահայտել այն վատն ու արատավորը, որ կա մեր կյանքում և մերժելդրանք:

Իմաստի ընկալում: Հիշելով մեր անցած ստեղծագործությունները՝ ի՞նչ լավագույն հատկանիշներ կթվեք, որոնց կրողները դարձանք մենք այս ընթացքում: Թվարկվածը կգրվի գրատախտակին.

- Բարություն
- Ընկերասիրություն
- Երախտագիտություն
- Աշխատասիրություն
- Հոգատարություն
- Հայրենասիրություն
- Մարդասիրություն:

Կյանքում ամենից սրբազան զգացմունքը ծնողների նկատմամբ սերն ու երախտագիտությունն է: Հովի. Շիրազի «Հայրս», և Դիանա Գրիգորյանի «Մոր ժպիտը» բանաստեղծությունները նվիրված են հոր և մոր նկատմամբ դրսևորվող որդիական սիրո գովերգմամբ:

Բանաստեղծությունները լսելուց հետո կփակցվեն հետևյալ ասույթները.

- Մոր սիրտը մարդկության սիրտն է, տիեզերքի սիրտը: Կա մի գեղեցիկ էակ, որին միշտ պարտք ենք. դա մայրն է: Մոր սիրտը հրաշքների անսպառ աղբյուր է: Ծնողի սիրուց ավելի սուրբ և ավելի անշահախնդիր ոչինչ չկա:

-Ի՞նչ է երախտագիրությունը , ու՞մ ենք համարում երախտագետ:

-Ինչպե՞ս ենք անվանում անշնորհակալ մարդուն: Ինչպես ասում է ասացվածքը.

«Մենք ոչ մի բանի համար այնպես շնորհակալ չենք, ինչպես շնորհակալության համար»: Իսկ սերը ծնողների հանդեպ բոլոր առաքինությունների հիմքն է:

«Մոր նամակը սրտառուչ խոսք է հոր հանդեպ երեխայի վերաբերմունքի մասին:Եվ ստեղծագործությունը ընդհանրացվում է հետևյալ եզրահանգումներով.

«Խրատը դեղի նման է, որքան դառը, այնքան բուժիչ»:

«Ծնողի խստությունը բուժիչ դեղ է, նրա մեջ ավելի շատ քաղցրություն կա, քանդառնություն»:

Սիլվա Կապուտիկյանի «Տղայիս» բանաստեղծությունը սիրո հակառակ դրսևորման մասին է. մայրը գնահատում է ուդուն, նրա մեջ տեսնում ազնիվ, բարի, հոգատար, թույլին թիկունք կանգնող մարդուն: Բանաստեղծությունը մարդ լինելու և կյանքում մարդ մնալու մասին է: Ստեղծագործությունը կընդհանրացնի այն գաղափարախոսությունը, որ գիտելիքները մարդուն կշիռ են տալիս իսկ արարքները՝փայլ:

-Ի՞նչ կարելի է ասել մարդկային արարքների մասին:

-Միայն այն ժամանակ մարդ կդառնաս, երբ սովորես ուրիշների մեջ տեսնել մարդուն:

-Ոչ ոք չի կարող դատել ուրիշների մասին, քանի դեռ չի սովերել դատել ինքն իր մասին:

-Ով չի ուսումնասիրել մարդուն ինքն իր մեջ , երբեք չի հասնի մարդկանց մասինխոր իմացության:

-Որ ստեղծագործությունն է սերմանում աշխատասիրություն, բացահայտում, որ աշխատանքի պտուղները ժառանգում են հաջորդ սերունդները:

-«Թագավորն ու հողագործը»: Եզրահանգումներ. «Աշխատանքը քաղցի հայրն է,մարդասիրության պապը, առողջության նախապապը»: «Անգործությունը ոչ միայն ծնում է տգիտություն, այլև հիվանդության պատճառ է դառնում»: Երկու նյութ նվիրվածէ մարդու բարեկամներին՝ կենդանիներին և բույսերին: Նրանց նկատմամբ ուշադրությունն ու հոգատարությունը ևս մոր պարտքն է: Խնամքով ու հոգատարությամբ պետք է վերաբերվել այն ամենին, ինչ բնությունը պարգևել է մեր իսկ բարօրության համար:

«Ու՞մ նվիրեմ իմ փոքրիկ սիրտը» ստեղծագործության հերոսը, մեզ պատմում է, թե ովքեր և ինչեր կարող են տեղ գտնել կամ չգտնել իր մաքուր սրտում: Իսկ լավ մարդըմիաժամանակ ապրում է հազար ու մի տեղ, հազարավոր սրտերում:

Այս դասի իրականացման համար նպատակահարմար գտա կիրառել «Հինգրոպեանոց ազատ շարադրանք» մեթոդը, որն իրենից ներկայացնում է հետևյալը՝ կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանք [11]:

Արդյունքում՝ ելենելով մեր թեմայի առանձնահատկությունից, երեխաները լրացրեցին իրենց պատկերացրած սիրտը: Ստորև ներկայացված է այդպիսի սրտի օրինակ:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով սույն հետազոտական աշխատանքը եկանք հետևյալ եզրահանգումներին՝

- Միջառարկայական բնույթի խնդիրների լուծումը հնարավորություն է տալիս հարակից առարկաներից ավելի վաղ ուսումնասիրած հասկացություններն ու օրենքները կիրառել տվյալ պահին ուսումնասիրվող ուսումնական առարկայի գիտելիքների համակարգում: Միջառարկայական բնույթի խնդիրների կազմումն ու լուծումը նպաստում են ճանաչողության գործընթացի ակտիվացմանը՝ խթանելով առարկայի նկատմամբ հետաքրքրության մեծացումը: Առավել մոտ լինելով իրականությանը և բնական իրավիճակներին՝ դրանք նպաստում են տարբեր երևույթների ավելի բազմակողմանի և խորքային ընկալմանը, զարգացնում են սովորողների՝ տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողություններն ու հմտությունները: Այդ խնդիրները բացահայտում են սովորողների ստեղծագործական ներուժը, զարգացնում պատկերավոր մտածողությանը:
- Միջառարկայական կապերի ստեղծմանը շատ է նպաստում նաև ինտեգրված դասերի անցկացումը: Մանկավարժական պրակտիկայում երբեմն նույնացնում են միջառարկայական կապերը իրականացնող և, այսպես կոչված, ինտեգրված դասերը: Այժմ էլ ինչպես բարձր դասարաններում, այնպես էլ արտադասարանական առարկայական խմբակների պարապմունքներում, կազմակերպվում են ինտեգրված դասեր՝ նվիրված կոնկրետ որևէ տարողունակ-համալիր ընտրովի թեմայի ուսումնասիրմանը: Օրինակ՝

  «Բնությունը և մարդը», «Ես և շրջակա աշխարհը», և այլ թեմաների համալիր ուսումնասիրումը հնարավոր է միայն միջառարկայական կապեր իրականացնող ինտեգրված դասերին:
- Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ոչ թե ինտեգրացում, այլ ուսումնական առարկաների ընթացակարգային կորդինացում միջառարկայական կապերի, որոնք արտացոլում են բնության և հասարակության մեջ առկա կապերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կոմենսկի Յ. Ա. «Մեծ դիդակտիկա», Երևան 2010, 432 էջ:
2. Кондаков Н. И. Логический словарь-справочник. – М., Наука, 1979.
3. Максимова В.Н. Международные связи в учебно-воспитальном процессесовременной школы»,М., «Просвещение»,1987.
4. Марфенин Н. Н. Чему и как учить для устойчивого развития? // Экология ижизнь. 2011. № 8(117). С. 9-16.
5. Пидкасистый П.И, «Педагогика» М., «Педагогическое общество России»,1998.
6. Селевко Г.К. «Современные образовательные технологии», М., «Народноеобразование»,1998.
7. Федорова В. Н., Кирюшкин Д. М. Межпредметные связи – М., Педагогика, 1989.
8. Համացանցային կայքեր:
9. Նունե Թեմուրյան // https://www.teachforyou.org/%D5%84%D5%AB%D5%BB%D5%A1%D5%BC%D5%A1%D6%80%D5%AF%D5%A1%D5%B5%D5%A1%D5%AF%D 5%A1%D5%B6-%D5%AF%D5%A1%D5%BA%D5%A5%D6%80%D5%AB-%D6%85%D5%A3%D5%BF%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%B4-%D5%AB%D5%B6%D5%BF%D5%A5%D5%A3%D6%80%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%A4%D5%A1%D5%BD%D5%A5%D6%80%D5%AB-%D5%AF%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A5%D6%80%D5%BA%D5%B8%D6%82%D5%B4
10. Կրթահարթակ // https://krtahartak.am/courses/obligatory/course-018/lessons/%D5%B4%D5%AB%D5%BB%D5%A1%D5%BC%D5%A1%D6%80%D5%AF%D5%A1%D5%B5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%A1%D5%BA%D5%A5%D6%80%D5%AB-%D5%AF%D5%AB%D6%80%D5%A1%D5%BC%D5%B4%D5%A1%D5%B4%D5%A2-%D5%AB%D5%B6%D5%BF/
11. Մկրտչյան Գայանե «Միասնացված ուսուցման արդյունավետությունը տարրական դասարաններում»// https://aspu.am/website/images/files/Mkrtchyan%20Gayane.pdf

Հավելվածներ